



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2013 թվականի N 311-Ա

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՐՏՈՒՆԻԿ ԳԱԳԻԿԻ ՊԱԼՈՅԱՆԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արթիկ համայնքի բնակիչ Մարտունիկ Պալոյանին պատկանող 27.04.2006թ-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /վկ. N 1388663/ 08-002-0123-0029 կադաստրային ծածկագրով փաստագրված Կամոյի փողոց 1-ին նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տնից և հողամասից Մարտունիկ Գագիկի Պալոյանին առանձնացվող 311.3քմ. մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Կամոյի փողոց 1-ին նրբանցք թիվ 10/1 հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք
ք. Արթիկ, Ազատության Հրապարակ 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2013 թվականի N 312-Ա

ԱՐԹԻԿ ԲԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ԵՎ ԹԻՎ 4 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴԿՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Արթիկ քաղաքի թիվ 1 և թիվ 4 նախադպրոցական հիմնարկների տանիքների վերանորոգման շինարարական աշխատանքների ծավալը և տեխնիկական վիճակը որոշելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
 - Աղասի Խաչատրյան- քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ- հանձնաժողովի նախագահ
 - Մանվել Քոչարյան-քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ— հանձնաժողովի անդամ
 - Համլետ Գասպարյան- կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ- հանձնաժողովի անդամ
 - Մամվել Բիչախյան -քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի առաջատար մասնագետ – հանձնաժողովի անդամ
- Հանձնաժողովին՝ եռօրյա ժամկետում ուսումնասիրել աշխատանքների ծավալը և տեխնիկական վիճակը ու կազմել թերությունների ակտ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թվականի N 313-Ս

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԻԲԵԿ ՍԵՐՅՈՒՄՅԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՍԱՐԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՍ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 912-ն որոշումով և հաշվի առնելով Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արթիկ քաղաքի Շահումյան փողոց թիվ 29/1 հասցեում գտնվող քաղաքացի Սարիբեկ Մերյոժայի Բաղդասարյանի /անձնագիր AE 0263155, տրված 08.07.1999թ, 028-ից, հասցեն՝ Նալբանդյան թիվ 64/ սեփական հողատարածքում կառուցված /անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական N 2769315 տրված 07.07.02011թ-ին, կադաստրային ծածկագիր 08-002-0059-0001/ 62.829 քմ. ընդհանուր մակերեսով շենք-շինությունները (բնակելի տանը կից կառույց 62.829քմ.) ճանաչել օրինական:
2. Ընդունել ի գիտություն
 - 1) Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
 - 2) Շինությունները կառուցված չէ ինժեներատրանսպորտային գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերին ու կանոններին էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտի իրավունք:
3. Սահմանել, որ սեփականատերը
 - ա) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Արթիկի համայնքի բյուջեի 900205101125 հաշվին պետք է վճարի ՀՀ Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 13-րդ կետի ա/ և բ/ ենթակետերով սահմանված 54050 (հիսունչորս հազար հիսուն դրամ) ՀՀ դրամ օրինականացման վճարը:
 - բ) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցների գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
4. 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թվականի N 314-Ա

**ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 19.09.2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 304-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ԵՎ ԲԱՂՐԱՄՅԱՆ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԻՆԵ ԽԱՆՈՅԱՆԻ
ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ/ ենթակետով և հաշվի առնելով Արթիկ քաղաքի Բաղրամյան 3-րդ նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող ավտոտնակը կառուցվել է Մարինե Խանոյանի կողմից և նկատի ունենալով, որ Արթիկ քաղաքի սեփականություն հանդիսացող Բաղրամյան 3-րդ նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող հողամասում կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական, կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի թիվ 731-ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արթիկ քաղաքի սեփականություն հանդիսացող Բաղրամյան 3-րդ նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող 59.4քմ. ընդհանուր մակերեսով հողամասում Մարինե Խանոյանի կողմից կառուցված շինություն գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը համարել համայնքի սեփականությունը և այն ճանաչել օրինական: /կցվում է հողամասի հատակագիծը/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թվականի N 315-Ա

**ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՏՈՆԱԿԱՆՅԱՆ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐՈ ԹԵԼՄԱՆԻ
ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ 1/2 ԵՎ ԱՇԽԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ 1/2 ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթիկ քաղաքի բնակիչներ Մարո և Աշխեն Յուզբաշյանների 17.09.2013թ. N 543 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Տոնականյան 2-րդ նրբանցք թիվ 9 հասցեում 008-0002-0153-0037 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 770.7քմ. որից 500.0քմ. մակերեսով հողամասը Մարո և Աշխեն Յուզբաշյանների սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 270.7քմ. մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թվականը, ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման գրությունը, Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի եզրակացությունը, և հիմք ընդունելով պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից ներկայացված չափագրական փաստաթղթերը, համաձայն որի Մարո և Աշխեն Յուզբաշյանների բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ2387-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Տոնականյան 2-րդ նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Մարո և Աշխեն Յուզբաշյանների հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 500.0քմ. մակերեսով հողամասին կից 270.7քմ. մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 770.7քմ մակերեսով հողամասի և մինչև 2001թ-ը շենք-շինությունների նկատմամբ:
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են չափազրման պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից:
3. Արթիկի քաղաքի Լենինի 2-րդ նրբանցք թիվ 6 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ, Տոնականյան 2-րդ նրբանցք թիվ 9:
4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Մարո և Աշխեն Յուզբաշյանների սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:
5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պարտավորությունը դնել Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման բնակ. կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թվականի N 316-Ա

ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ
ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԻ ՏԻԿՈՒՇ ԱՂԱՄՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթիկ քաղաքի բնակիչ Տիկուշ Ադամյանի (ծնված 00.00.1927թ.) 23.08.2013թ. N 488 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Գր. Լուսավորիչ 3-րդ նրբանցք թիվ 3/1 հասցեում 08-002-0145-0004 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 360.7քմ. որից 100.0քմ. մակերեսով հողամասը Տիկուշ Ադամյանի ժառանգության իրավունքով ձեռք բերած հողամասն է: Ժառանգության իրավունքով ձեռք բերած հողամասին կից օգտագործվող 260.7քմ. մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թվականը, ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման 26.08.2013թ. N ԱՏ -23/08/2013-42-0001 գրությունը, Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի եզրակացությունը, և հիմք ընդունելով պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից ներկայացված չափագրական փաստաթղթերը, համաձայն որի Տիկուշ Ադամյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ2387-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

6. Վերականգնել Գր. Լուսավորիչ 3-րդ նրբանցք թիվ 3/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Տիկուշ Ադամյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ ժառանգության իրավունքով ձեռք բերած 100.0քմ. մակերեսով հողամասին կից 260.7քմ. մակերեսով հողամասի չափով` ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 360.7քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:
7. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են չափագրման պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից:
8. Արթիկի քաղաքի Հոկտեմբերյան թիվ 1 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե` ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ, Գր. Լուսավորիչ 3-րդ նրբանցք թիվ 3/1:
9. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Տիկուշ Ադամյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:
10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պարտավորությունը դնել Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման բնակ. կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ` 374 244 52021, էլ. փոստ` www.qax.artik@gmail.com, ինտ, կայք` www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թվականի N 317-Ա

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի` ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող Իսահակյան 19 շենքի թիվ 30 08-002-0023-0002 կադաստրային ծածկագրով բնակարանին տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Իսահակյան փողոց 19 շենք թիվ 30 բնակարան հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ`

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թվականի N 318-Ա

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՇԻ ՔՆՈՒՇ ԲԻԶՆԵՍԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արթիկ համայնքի բնակչուհի Քնուշ Բիչախյանին պատկանող ըստ 24.11.2010թվականի օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով (ս/մ 2471) Արթիկի քաղսովետի գործկոմի 24.06.1988թ-ի թիվ 7 արձանագրությամբ 08-002-0083-0015 կադաստրային ծածկագրով «Կոմիտաս» թաղամասի «Թ» կվարտալի թիվ 10 հասցեի բնակելի տանը տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Մաշտոցի փողոց թիվ 38 հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2013 թվականի N 319-Ա

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՅԱՇԱ ԱՍՏՏՈՒՐԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի <<Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արթիկ համայնքի բնակիչ Յաշա Ասատուրի Աբրահամյանին Արթիկի քաղխորհրդի 28.09.1990թ. թիվ 10 որոշմամբ 08-002-0078-0086 կադաստրային ծածկագրով 600.0քմ. մակերեսով հատկացված հողամասին տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Դուրյան փողոց թիվ 2/1 հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ.՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 սեպտեմբերի 2013 թվականի N 320-Ա

ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԿԻՑ
ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱԴԱՄ ԳԱՐԵԳԻՆԻ ՉԹԵՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթիկ քաղաքի բնակիչ Ադամ Գարեգինի Չթեյանի (ծնված 07.05.1955թ.) 23.09.13թ. թիվ 550 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Գր. Նարեկացի փողոց թիվ 33 հասցեում 08-002-0080-0017 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1250.0քմ, որից 600.0քմ. մակերեսով հողամասը Ադամ Չթեյանի սեփականության իրավունքով ձեռք բերած հողամասն է: Սեփականության իրավունքով ձեռք բերած հողամասին կից օգտագործվող 300.0քմ. մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ սեփականության իրավունքով փոխանցվող հողամասերին կից ավել օգտագործվող 350.0քմ. մակերեսով հողատարածքը ենթակա է օտարման հողի տվյալ տարածքի համապատասխան կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 528 դրամ:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման 26/09/2013թ. N ԱՏ 25/09/2013-42-0009 գրությունը, Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի եզրակացությունը, և հիմք ընդունելով պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից ներկայացված չափագրական փաստաթղթերը, համաձայն որի Ադամ Չթեյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական

գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին»» հ2387-Ն որոշմամբ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

11. Վերականգնել Գր. Նարեկացի փողոց թիվ 33 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ադամ Չթեյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ սեփականության իրավունքով ձեռք բերած 600.0քմ. մակերեսով հողամասին կից՝ օրենքի ուժով անհատույց սեփականության իրավունքով փոխանցվող 300.0քմ. մակերեսով հողամասի և նշված հողամասերին կից ավել օգտագործվող 350.0քմ. մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1250.0քմ. մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:
12. Ադամ Չթեյանի կողմից իր հողամասի սահմանների մեջ գտնվող ավել օգտագործվող 350.0քմ. մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքով վաճառելու իրեն՝ 1քմ-ի համար սահմանելով տվյալ տարածքի հողի գործող կադաստրային արժեքի չափը:
13. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են չափազրման պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից:
14. Արթիկի քաղաքի Կոմերիտիության փողոց թիվ 18 հասցեի բնակելի տանը տրամադրել ք.Արթիկ, Գր. Նարեկացի փողոց թիվ 33 հասցեն:
15. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Ադամ Չթեյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:
16. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պարտավորությունը դնել Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման բնակ. կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի վրա:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ` 374 244 52021, էլ. փոստ` www.qax.artik@gmail.com, ինտ, կայք` www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հոկտեմբերի 2013 թվականի N 321-Ա

**ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՏՈՒՖԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՆՐԲԱՆՑՔԻ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ
ՍԱԼԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով Արթիկ քաղաքի Տուֆագործների փողոցի թիվ 1 նրբանցքի տուֆ քարով սալապատման աշխատանքների կատարման անհրաժեշտությունը և ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 39-րդ հոդվածի 3-րդ մասով, „Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով ու հիմք ընդունելով համայնքի ավագանու 2013թ. սեպտեմբերի 30-ի թիվ 85-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Կատարել Արթիկ քաղաքի Տուֆագործների փողոցի թիվ 1 նրբանցքի տուֆ քարով սալապատման աշխատանքներ` համաձայն „Հով-Լեն” ՍՊԸ-ի կողմից կազմած նախահաշվի, հատկացնելով 824090 /ուր` հարյուր քսանչորս հազար իննսուն/ դրամ:
2. Արթիկ քաղաքի Տուֆագործների փողոցի թիվ 1 նրբանցքի տուֆ քարով սալապատման աշխատանքների կատարումը հանձնել „Քոչար” ՍՊԸ-ին` նրա հետ կնքելով կապալի պայմանագիր:

ՔԱՂԱՔԱՊԵՏ`

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հոկտեմբերի 2013 թվականի N 321-Ա

ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՏՈՒՖԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՆՐԲԱՆՑՔԻ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ

ՍԱԼԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Արթիկ քաղաքի Տուֆագործների փողոցի թիվ 1 նրբանցքի տուֆ քարով սալապատման աշխատանքների կատարման անհրաժեշտությունը և ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 39-րդ հոդվածի 3-րդ մասով, „Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով ու հիմք ընդունելով համայնքի ավագանու 2013թ. սեպտեմբերի 30-ի թիվ 85-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

3. Կատարել Արթիկ քաղաքի Տուֆագործների փողոցի թիվ 1 նրբանցքի տուֆ քարով սալապատման աշխատանքներ՝ համաձայն „Հով-Լեն” ՍՊԸ-ի կողմից կազմած նախահաշվի, հատկացնելով 824090 /ուր՝ հարյուր քսանչորս հազար իննսուն/ դրամ:
4. Արթիկ քաղաքի Տուֆագործների փողոցի թիվ 1 նրբանցքի տուֆ քարով սալապատման աշխատանքների կատարումը հանձնել „Քոչար” ՍՊԸ-ին՝ նրա հետ կնքելով կապալի պայմանագիր:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հոկտեմբերի 2013 թվականի N 323-Ա

**ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՔԱՐՅԱՆ ԹԻՎ 10/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԼՍՑԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթիկ քաղաքի բնակիչ Անդրանիկ Գալստյանի դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Աղաքարյան թիվ 10/1 հասցեում 08-002-0117-0025 կադաստրային ծածկագրով ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 400.0քմ., որը պատկանում է Անդրանիկ Գալստյանին: 400.0քմ. մակերեսով հողամասը առկա շենք-շինություններով օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման գրությունը, Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի եզրակացությունը, և հիմք ընդունելով պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից ներկայացված չափագրական փաստաթղթերը, համաձայն որի Անդրանիկ Գալստյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ2387-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

17. Վերականգնել Աղաքարյան թիվ 10/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Անդրանիկ Գալստյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան

գրադեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ. մակերեսով հողամասի և վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

18. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են չափագրման պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից:
19. Արթիկի քաղաքի Աղաքարյան թիվ 10 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ, Աղաքարյան թիվ 10/1:
20. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Անդրանիկ Գալստյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:
21. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պարտավորությունը դնել Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման բնակ. կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի վրա:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հոկտեմբերի 2013 թվականի N 324-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՌՈՆԻԿ
ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՅՎԱԾ 19.0ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ
ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշմամբ սահմանված <<Պետության և համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2013թ. սեպտեմբերի 30-ի թիվ 88-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի <<Լմբատ 2>> թաղամասի թիվ 17 շենքից արևմուտք ընկած հատվածում, Վիկտոր Համբարձումյան փողոց թիվ 17/2 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-002-0066-0001/ Ռոնիկ Նիկողոսյանին ավտոտնակ կառուցելու նպատակով վարձակալական հիմունքներով հատկացված 19.0քմ. մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու Ռոնիկ Նիկողոսյանին:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հոկտեմբերի 2013 թվականի N 325-Ա

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԻԶ ՀՐԱԶՅԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ
ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածով և հաշվի առնելով Հրաչյա Նիկողոսյանի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի „Աշխատանքի ընդունման մասին” թիվ 579 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԾՅՈՒՄ

1. Արթիկի մարզադպրոցի մարզիչ Հրաչյա Նիկողոսյանին 2013թվականի հոկտեմբերի 1-ից նշանակել մարզադպրոցի տնօրենի պաշտոնին:
2. Աշխատավարձի չափը սահմանել համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հոկտեմբերի 2013 թվականի N 326-Ա

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից /08-002-0081-0001 կադաստրային ծածկագրով/ 78.8քմ. մակերեսով հողամասին տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Պարույր Սևակ փողոց թիվ 5/5 հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հոկտեմբերի 2013 թվականի N 327-Ա

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԻԿ ՍԻՄՈՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արթիկ համայնքի բնակիչ Արմիկ Սիմոնի Սահակյանին Արթիկի քաղաքապետի գործկոմի 29.08.1989թ-ի թիվ 8 որոշմամբ 08-002-0094-0019 կադաստրային ծածկագրով 600.0քմ. մակերեսով հատկացված հողամասին տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Ստեփան Զորյան փողոց թիվ 21 հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ. կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հոկտեմբերի 2013 թվականի N 328-Ա

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻԶ ՍԵՐՅՈԺԱ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արթիկ համայնքի բնակիչ Սերյոժա Պապիկյանին պատկանող 24.02.2006թ-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով /վկ. N 1401255/ փաստագրված Բաղրամյան փողոցի 20 շենքի թիվ 4 հասցեում գտնվող 08-002-0040-0065 կադաստրային ծածկագրով բնակարանին տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Բաղրամյան փողոց 20 շենք թիվ 2 բնակարան հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 330-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՂԻ
ՄԵԼԱՆՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԼՄԲԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 29 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 6
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 30.09.2013 թվականի թիվ 89-Ա որոշումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի քաղաքային համայնքի Լմբատ թաղամասի թիվ 29 բնակելի շենքի թիվ 6 բնակարանը անհատույց նվիրել Մելանյա Աբրահամյանին, իր ընտանիքի անդամների հետևյալ կազմով
 - 1) Աբրահամյան Դավիթ
 - 2) Աբրահամյան Զեմֆիրա
 - 3) Աբրահամյան Հովիկ
 - 4) Աբրահամյան Հայկազ
 - 5) Աբրահամյան Համլետ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ` 374 244 52021, էլ. փոստ` www.qax.artik@gmail.com, ինտ, կայք` www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 331-Ա

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԶՈՒՀԻ ՎԱՐՇԱՄ ՀՐԱԶԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի` ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

Արթիկ համայնքի բնակչուհի Վարշամ Հրաչի Միքայելյանին պատկանող 27.04.2016թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով (վկ. N 1399106) 08-002-0107-0011 կադաստրային ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Գր. Զոհրապ փողոցում գտնվող բնակելի տանը տրամադրել ՀՀ Շիրակի մարզ, Գր. Զոհրապ փողոց թիվ 22/1 հասցեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ`

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ www.qax.artik@gmail.com, ինտ, կայք՝ www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 332-Ա

ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱԽԹԱՆԳ
ՄՆԱՑԻ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 10.09.2013Թ. ԹԻՎ 295-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթիկ քաղաքի բնակիչ Վախթանգ Մնացի Տեր-Կարապետյանի դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Թումանյան 2-րդ փակուղի թիվ 1 հասցեում 08-002-0054-0012 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 501.4քմ., որից 450.0քմ. մակերեսով հողամասը Վախթանգ Մնացի Տեր-Կարապետյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 51.4քմ. մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման ԱՏ-23/08/2013-42-0008 գրությունը, Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի եզրակացությունը, և հիմք ընդունելով պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից ներկայացված չափագրական փաստաթղթերը, համաձայն որի Վախթանգ Մնացի Տեր-Կարապետյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 912-Ն որոշումով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին բ/ կետի ենթակետով, ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական

բնակավայրերում, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին»> հ2387-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

22. Վերականգնել Թումանյան 2-րդ փակուղի թիվ 1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վախթանգ Մնացի Տեր-Կարապետյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 450.0քմ. մակերեսով հողամասին կից 51.4քմ. մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 501.4քմ. մակերեսով հողամասի և մինչև 2001թվականը կառուցված շենք-շինությունների նկատմամբ:
23. Հողամասում առկա շենք-շինությունները, որոնք կառուցվել են 2001թ-ից հետո՝ ճանաչել ինքնակամ:
24. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են չափագրման պետական լիազոր մարմնի կողմից որակավորման վկայական ստացած անձանց և կազմակերպությունների կողմից:
25. Արթիկի քաղաքի Պլեխանովի փողոց թիվ 45 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե ՀՀ Շիրակի մարզ, ք.Արթիկ, Թումանյան 2-րդ փակուղի թիվ 1:
26. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Վախթանգ Մնացի Տեր-Կարապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:
27. Սույն որոշման ընդունման կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել քաղաքապետի 10.09.2013թ. թիվ 295-Ա որոշումը:
28. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պարտավորությունը դնել Արթիկի քաղաքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, հողօգտագործման բնակ. կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի վրա:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ` 374 244 52021, էլ. փոստ` www.qax.artik@gmail.com, ինտ, կայք` www.artik.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հոկտեմբերի 2013 թվականի N 333-Ս

**ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ
ԿԻՅ ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՅՈՒՂԱՔԵՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթիկ քաղաքի բնակիչ Յուդաբեր Հայրապետյանի (ծնված 26.09.1940թ.) դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ղարիբջանյան 1-ին նրբանցք թիվ 2/1 հասցեում 08-002-0025-0050 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 467.5քմ, որից 251.0քմ. մակերեսով հողամասը Յուդաբեր Հայրապետյանի ժառանգության իրավունքով ձեռք բերած հողամասն է: Ժառանգության իրավունքով ձեռք բերած հողամասին կից օգտագործվող 216.5քմ. մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

